

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲՈՒՆՎԱՐԱՆԱԿԱՆ ԱՅԴԻ  
БОТАНИЧЕСКИЙ САД АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բյուլետեն

№ 18, 1961

Բյուլետեն

Ն. Մ. ԳԵՐՄԱՆՅԱՆ

ԲՈՑԵՆՈՒ ԲԱԶՄԱՑՄԱՆ ՄԻ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ

Տարեց տարի գնալով մեծանում է բազմամյա բույսերի նշանակությունը՝ ծաղկային ձևավորումների մեջ: Այդ բույսերի շարքում կարեոր տեղ է գրավում բոցենին (*Phlox paniculata* L.):

Բազմամյա բոցենու հայրենիքը Հյուսիսային Ամերիկան է, որտեղ տարածված են նրա ավելի քան 50 տեսակներ:

Բազմամյա բոցենին հնագույն ծաղկային բույսերից մեկն է: Եվրոպա է բերվել 19-րդ դարում, իսկ ՍՍՌՄ-ում սկսել է տարածվել միայն վերջին երեք տասնամյակների ընթացքում: Հայաստանի ծաղկաբուծության մեջ այս արժեքավոր տեսակը դեռ շատ քիչ է տարածված:

Նախնական դիտողությունները ցույց են տվել, որ նա ռեսպուբլիկայի շատ շրջաններում, ինչպես նաև Երևանում հաջողությամբ կարող է աճել և դառնալ առաջնակարգ ծաղկային կուլտուրա:

Բազմամյա բոցենու մեջ մոտ քիչ տարածման պատճառներից մեկը նրա թփերի և սերմերի ձեռք բերման դժվարությունն է:

Ելնելով դրանից, մենք փորձեցինք գտնել նրա արագ ու հեշտ բազմացման նոր հղանակներ:

Բոցենու բազմացման եղանակների ուսումնասիրության գործում մենք հաշվի առանք այն հանգամանքը, որ նրա կտրոնները բավականին հեշտ են արմատակալվում, սակայն մասսայական կտրոններ վերցնելու դեպքում տվյալ տարին զրկվում ենք ծաղիկներից, որովհենու ամենից լավ արմատակալվում են ծաղիկներ գոյացնող ցողուններից վերցված գարնանային կտրոնները:

Կտրոնների մասսայական մթերումը նյութական վիճակ կարող է հասցնել ծաղկային տնտեսությանը, պակասեցնելով ծաղիկների քանակը: Ելնելով դրանից, որոշակի գտնել բոցենու բազմացման այնպիսի ձև, որ թե տվյալ տարին լրիվ քանակությամբ ու լիարժեք ծաղիկներ ստացվեն և թե բավականին քանակությամբ կտրոններ:

Համապատասխան փորձերը սկսել ենք 1958 թվի հունիսի 9-ին, նպատակ ունենալով կտրոնները արմատակալեցնել հենց թփի վրա: Դրա համար մենք ընտրեցինք 10 միատեսակ թուփ և բուլորի հիմքում էլ բուկլից կատարեցինք 17—20 սմ բարձրությամբ, հենց նույն մարգի հողով: Հստ որում երկու թուփը բուկլից կատարվեց առանց որևէ այլ միջոցառման, իսկ մնացած 8 թփերի բոլոր ցողունների հիմքի վրա դանակով կեղեկի հատումներ կատարվեցին, այն հաշվով, որ կտրվի միայն կեղեկ՝ յուրաքանչյուր թփի վրա տարբեր ձևի: Երկու թփի մոտ կեղեկ հանվեց օղակաձև, երկուսի մոտ՝ կիսաօղակաձև, երկուսի մոտ քառանկյունի ձևով հանվեց կեղեկի 1/4 մասը: Մնացած երկուսի վրա արվեց ստորակետանման կտրվածք: Ամառը բոլոր բույսերի նկատմամբ էլ սովորական և միատեսակ խնամք է տարվել:

Աշնանային ուժեղ ցրտահարություններից 1—2 շաբաթ առաջ հողաթրմ-քերը քանդվեցին և մանրամասն ստուգվեց բոլոյսերի վիճակը:

Դիտողությունները ցույց տվեցին, որ բոլոր դեպքերում էլ ցողունների որոշ քանակի վրա արմատներ են առաջացել, սակայն արմատակալման աստիճանը ավելի բարձր է այն ցողունների մոտ, որոնց հիմքում կեղեկի հատումներ են կատարվել, բացառությամբ օդակածեկ հատումից, որի դեպքում ցողունների մեծ մասը (78 տոկոս) չորացել էր:

Արամատակալել էին նաև կոնտրոլ թիերը, որոնց վրա հատումներ չեր կատարվել, բայց վերջիններիս մոտ արմատակալման տոկոսը համեմատարար բավականին ցածր էր (49,9 տոկոս): Այդ տվյալները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Վերլուստ	Կերպերի հատման մեջ	Կերպերի հատման մեջ	Թվերի համար	Ցողունների ընդունուլության մեջ	Արմատակալու մեջ ցողունների դաշտականություն	Աղյուսակային մուկուսն
1	օդակածեկ կիսաօղակածեկ	9/6 - 58 թ.	2	23	5	21,7
2	կածեկ	«	2	19	9	47,3
3	քառակուսի ստորակետա- նման	«	2	21	17	80,9
4	նման	«	2	25	17	68,0
5	առանց հատ- ման	«	2	22	9	49,9

1958 թվին ստացված արդյունքները հիմք տվեցին մեզ 1959 թվին նույն փորձը կրկնել ավելի լայն ծավալով: Նախ փորձը կատարվեց երեք ժամկետներով՝ կոկոնակալումից առաջ, կոկոնակալման շրջանում և ծաղկման շրջանում:

Ֆուրաքանչյուր ժամկետին վերցրել ենք 4-ական թուփ, որոնցից մեկը բուկլից է կատարվել առանց կեղեկի հատման, իսկ մնացած երեք թիերի ցողունների հիմքում կեղեկ կտրվել է տարբեր ձևով: Որպեսզի բուկլիցի հողը չսահի և չհեռանա (մանավանդ ոռոգման ժամանակ), բույսը հագցրել էինք արկղի մեջ, որը հատակ չուներ և այդ արկղը լցրել էինք հողով: Սրա հետևանքով ամրող վեճետացիայի ընթացքում բուկլիցի հողը մնացել է անշարժ: Արկղի պատերի բարձրությունը մոտավորապես 20 սմ էր: Աշնան ուժեղ ցրտահարություններից առաջ (հոկտեմբերի 13-ին) յարկղները հանվեցին, հողը հետ տրվեց և կատարվեց հաշվառում, որի տվյալները բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս հետեւյալը՝

ա) Բոլոր դեպքերում էլ կոնտրոլը (առանց հատման) ավելի քիչ արմատակալում է տվյալը, քան մյուս վարիանտները:

բ) Բոլոր ժամկետներից ամենանպատակահարմարը առաջին ժամկետն է, երբ կեղեկի հատումը և բուկլիցը կատարվում է կոկոնակալումից առաջ, այսինքն առաջին ժամկետին ընդհանուր առմամբ արմատակալման տոկոսը ավելի բարձր է:

գ) Հստ հատման ձևի բոլոր ժամկետներում էլ արմատակալման ամենաբարձր տոկոսը ստացվել է քառակուսի կտրվածքի դեպքում:

Դիտողությունները ցույց են տվել, որ բոլոր ցողուններն էլ մանավանդ կեղևահատված, առատ արմատային սիստեմ են առաջացրել և ստացվել են միանգամայն կենսունակ բույսեր։

Աղյուսակ 2

Վերը բարձրացնելու ժամանակաշրջան	Փողոքի դրվագ- առանձնահա- նակը	Կեղևի հաս- տակ ժամա- նակը	Կեղևի հա- ստակ ժա- մանակը	Փողոքի համար	Ցողունների ընդհանուր բանակը	Աղյուսա- կածածին բա- նակը	Աղյուսա- կածածին բա- նակը
1	Կոկոնակալու- մից առաջ	7/6-59 թ.	Կիսալուսնաձև	1	13	7	53,7
	«	«	քառակուսի ստորակետա- նման	1	20	16	80,0
	«	«	առանց հատման	1	10	7	70,0
2	Կոկոնակալման շրջանում	12/6-59 թ.	Կիսալուսնաձև	1	20	9	45,0
	«	«	քառակուսի ստորակետա- նման	1	8	3	37,5
	«	«	առանց հատման	1	12	6	50,0
3	Ժաղկման շրջան	17/6-59 թ.	Կիսալուսնաձև	1	14	8	57,1
	«	«	քառակուսի ստորակետա- նման	1	17	6	35,3
	«	«	առանց հատման	1	10	6	60,0
			«	14	9	64,2	
			«	10	5	50,0	
			«	14	6	42,8	

Աշնանը հաշվառումից հետո արմատակալված կտրոնները հեռացվել են և տնկվել նոր բույսեր ստանալու համար։ Արմատակալման միջավայրի նշանակությունը պարզելու նպատակով կատարվել են որոշ նախնական փորձեր որտեղ՝ մեկ թփի մոտ բուկլից կատարվել է ոչ թե մարգի հողով, այլ ավազախառն հողով, իսկ մեկ ուրիշի մոտ՝ մաքուր ավազով։ Դիտողությունները ցույց տվեցին, որ ավազախառն հողով և մանավանդ ավազով բուկլից կատարելու դեպքում ավելանում են գոյացող արմատների թիվը, ինչպես նաև արմատների երկարությունն ու հաստությունը համեմատած հողով բուկլից կատարված ցողունների հետ։

Աղյուսակ 3

Բուկլից կատարված է	Առաջա- սած ար- մատների թիվը	Արմատների միջին եր- կարությունը սմ	Արմատների միջին հա- ստությունը սմ
Մարգի հողով	7	10	1,2
Ավազախառն հողով	14	12	1,5
Ավազով	23	14	2

Զնայած նրան, որ փորձի տակ քիչ թվով բույսեր են եղել, այնուամենայնիվ այս տվյալները պարզ ցույց են տալիս ավազի գգալի առավելությունները սովորական հողի նկատմամբ։

Վերջում կարևոր է նշել, որ փորձի տակ եղած մայրական բույսերի բոլոր ցողուններն էլ նորմալ ժաղկել են և սերմնակալել։

Նկարագրված փորձերը մեզ իրավունք են տալիս առաջարկելու կտրոնավորման այս ձևը լայնորեն կիրառել բոցենու բազմացման գործում, հաշվի առնելով, որ այս ձևը ունի մի շարք դրական կողմեր՝

ա) Այն տեխնիկապես շատ հեշտ է իրականացնել:

բ) Մեկ թփից միշին հաշվով աշնանը ստացվում է մինչև 10-ը և ավելի արմատակալած կտրոն:

գ) Ոչ մի բացասական ազդեցություն չի թողնում մայր բույսի հաջորդ տարվա աճի և զարգացման վրա:

դ) Բոցենու բազմացման համար ջերմոցային տարածություններ չի պահանջվում:

ե) Նույն ցողունից տարվա ընթացքում ստացվում է թե ծաղիկ և թե արմատակալած կտրոն, որը հաջորդ տարին ծաղկում է:

Н. М. ГЕРМАНИЯН

## Новый способ размножения флокса

### Р е з ю м е

Многолетний флокс (*Phlox paniculata L.*) является одной из ведущих цветочных культур, однако в цветоводстве Армении он распространен слабо в связи с недостаточностью посадочного материала.

С целью разработки способа быстрого размножения флокса, без снижения урожая его цветков нами были поставлены специальные опыты по укоренению черенков без отделения их от материнского куста. На подопытные кусты надевались деревянные ящики без дна, заполняемые землей или песком, с целью окучивания укореняемого стебля.

У основания всех стеблей острый ножом делался надрез коры различной формы (квадратный, полукругом, в виде запятой). Опыты проводились в три срока: перед бутонизацией, в период бутонизации, при цветении. Осеню кусты освобождались от земли и производился учет укоренения. Выяснилось, что при нанесении повреждений коре стебля заметно повышается % укоренения черенков, достигая 50—80%, против 35—45% у контроля (окучивание без надреза коры). Лучшие результаты укоренения черенков получены в период до бутонизации. Высший процент укоренения получался при повреждении коры в форме квадрата. Укорененные описанным способом черенки были высажены в грядку и зацвели на следующий год.

Разработанный нами способ можно рекомендовать для внедрения в производство, так как он имеет следующие преимущества перед обычным способом черенкования: 1. он технически легко осуществим; 2. с каждого куста осенью получается до 10 и более укорененных черенков; 3. отсутствует отрицательное влияние на развитие куста в будущем году; 4. для размножения не требуется теплично-парниковой площади; 5. с одних и тех же стеблей в течение сезона получаются нормальные цветы и укорененные черенки.